

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>


ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

18-25

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ստեփանակերտ-2007

17 25

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԻԻ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նվիրում եմ հորս՝
Յուրի Սարգսյանի անմահ հիշատակին*

ԱՐՅԱԽՅԱՆ

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

40 504

ԱՐՅԱԽ ԳԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԳԱՐԱՆ

Սրբեփանակերպ : 2007

ՀՏԳ 398 = 919.81:809.198.1
ԳՄԴ 82.3Հ + 81.2Հ
Ս 259

Սույն ժողովածուն ընդգրկում է 266 ավանդություն և ավանդագրույց՝ 55 տարբերակներով, որոնցից 244-ը առաջին անգամ են ներկայացվում գրավոր ձևով: Նյութերը հիմնականում գրի են առվել մեր կողմից 1992-2006թթ. բանասացների ծննդավայրում կամ ապրելու վայրում և պահվում են մեր անձնական արխիվում: Որոշ բնագրեր, գրի առված ԱրՊՀ ուսանողների կողմից, գտնվում են բարբառագետ Կարո Դավթյանի (1904-1985) անձնական և ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվներում:

Ժողովածուն ունի ներածություն և ծանոթագրություններ:
Ներածության մեջ ներկայացվում են արցախյան ավանդությունների հավաքագրման պատմությունը, աղբյուրները ժողովրդական բանահյուսության այլ ժանրերի ստեղծագործությունների հետ, ժանրային և իմաստային ընդհանրությունները և առանձնահատկությունները:

Ծանոթագրություններում լուսաբանվում են ավանդախոսների կենսագրական տվյալները, հարկ եղած դեպքում կատարվում համապատասխան հղումներ այլ աղբյուրներում տպագրված այն ավանդությունների վերաբերյալ, որոնք ունեն նման բովանդակություն:

Բուն ժողովածուն բաղկացած է ինը բաժնից: Իրարից տարբերակելու և տեղաբաշխելու նպատակով ավանդություններին տրված են թվահամարներ և վերնագրեր, որոնցից հետո անհրաժեշտության դեպքում կցված են համառոտ տեղեկություններ տվյալ վայրի կամ գերգաստանի տեղագրման վերաբերյալ: Տարբեր վայրերի հետ կապված բոլոր ստեղծագործությունները դասակարգված են ըստ այդ վայրերի աշխարհագրական դիրքի՝ հարավից հյուսիս՝ հաջորդականորեն:

Նյութերը բերված են առանց բնագրերի բովանդակային փոփոխության: Նատորեն պահպանված է յուրաքանչյուր խոսվածքի բարբառային տառադարձությունը, որը, բացի ավանդախոսից, ճշգրտված է տվյալ գյուղի խոսվածքը կրող առնվազն երկու այլ բարբառախոսի միջոցով:

Ժողովածուում տեղ են գտել ավանդություններ և Դարբաբայի բուն բարբառի, և Հաղորթի, Շաղախի, Շահումյանի, Մեհտիշենի ենթաբարբառների շուրջ 80 խոսվածքներով:

Ընթերցողներին օժանդակելու նպատակով ավելորդ չենք համարում ներկայացնել Արցախի տարածքի խոսվածքներին հատուկ հնչյունները, որոնք բացակայում են գրական հայերենում.

*ա՛ - ա ծայնավորի քմային տարբերակը՝ ա՛րիւն, ա՛նանտ, հանր, հանյան,
ու - ու ծայնավորի քմային տարբերակը՝ ուրո՞ւզ՝հուն, վիւրո՞ք՝-տուրք՝, տոււզոն, սուրիւ:*

*ծ - օ ծայնավորի քմային տարբերակը՝ ծգձը, շծր, ծծր, ք՛ծրիւն;
ը՛ - ը և է ծայնավորների միջին աստիճանը՝ մը՛ծ, խը՛ք, վը՛տը, ծընը՛ծընը;
ը՞ (գործածական է միայն որոշ՝ հատկապես Մայրտակերտի շրջանի խոսվածքներում) - ը և ի ծայնավորների միջին աստիճանը՝ ը՛վիւննայ, խը՛վա, նը՛ստա, լը՛վօթուն;*

*գ՛ - գ բաղաձայնի քմային տարբերակը՝ գ՛իղան, գ՛օլ, դանգ՛ա, խորնգ՛,
կ՛ - կ բաղաձայնի քմային տարբերակը՝ կ՛իւտի, կ՛իւ, կ՛ունա, կ՛ղրկ՛ամօտ;
ք՛ - ք բաղաձայնի քմային տարբերակը՝ ք՛ծրիւն, ք՛ծթուկ, բանք՛ի, մաղանք՛:*

Որոշ խոսվածքներում հազվադեպ գործածություն ունեն *դ՛, գ՛, թ՛, լ՛, ծ՛, ճ՛, ս՛, ց՛* և այլ բաղաձայններ, որոնք ներկայացնում են գրական հայերենի համապատասխան հնչյունների քմային տարբերակները՝ *քրքքանը՛, մազ՛, խութ՛, լ՛ամ, կըծ՛ աքար, ճ՛իճանչի, քըս՛ի, քըց՛ի*: Տարածքի բոլոր խոսվածքներում բացակայում է *ֆ* հնչյունը, որի փոխարեն ամենուր գործածվում է *փ* բաղաձայնը:

Գիրքը տպագրության է երաշխավորել ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունը

Խմբագիր՝ ք.գ.թ. Ալվարդ Ղազիյան

*Գրախոսներ՝ ք.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա. Խանյան
ք.գ.թ., դոցենտ Ա.Մ. Արայան*

Մարզայան Արմեն Յուրիի
Ս 259 Արցախյան ավանդություններ. – Ստեփանակերտ: «Գիգակ պլուս», 2007. – 112 էջ:

Ժողովածուում ներկայացվում է արցախյան 266 ավանդություն և ավանդագրույց: Ժողովածուն ունի ներածություն և ծանոթագրություններ: Ներածության մեջ ներկայացվում են արցախյան ավանդությունների հավաքագրման պատմությունը, աղբյուրները ժողովրդական բանահյուսության այլ ժանրերի հետ, ժանրային և իմաստային ընդհանրությունները և առանձնահատկությունները: Ծանոթագրություններում լուսաբանվում են ավանդախոսների կենսագրական տվյալները:

Ժողովածուն նախատեսված է բանահյուսությանը և բարբառագիտությանը գրող-վոլանտների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար: ԳՄԴ 82.3Հ + 81.2Հ

ISBN 978-99941-827-7-0 ©Մարզայան Արմեն, 2007թ.

Ավանդությունները էպիկական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալում եղած և տեղի ունեցած իրենք ու դեմքերը, դեպքերն ու երևույթները: Դրանց շնորհիվ հարազատ ժողովրդի և բնաշխարհի առանձնահատկությունները, հնում տեղի ունեցած պատմական դեպքերը, ներքին և արտաքին շփումներն ու փոխհարաբերություններն արտացոլող պատմությունները փոխանցվում են սերնդեսերունդ նախատելով ժողովրդի պատմական գիտակցության ձևավորմանն ու ինքնության հարատևմանը:

Արցախյան բանահյուսության մեջ ուրույն տեղ ունեն ավանդությունները: Ժողովրդական նման ստեղծագործություններ են ընդգրկված Ա. Տալալյանի «Ճանապարհորդությունի մեծն Հայաստան» (մասն 1, 1842թ., մասն 2, 1858թ.), Մ. Բարխուդարյանի «Արցախ» (1885 թ.), «Արվանդից աշխարհը և դրացիք» (1893 թ.), Լեոյի «Ռիստալորի հիշատակարանը» (1885 թ.), «Իմ հիշատակարանը» (1890 թ.), Բաֆթու «Խանսայի մելիքությունները» (1895 թ.), Ե. Լալալյանի «Վարանդա» (Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ.) գործերում, ԱԿՕԴՕԻ և ՇՄՈՄԻԿԻ տարրեր հատորներում, ինչպես նաև մի շարք ծեսագրերում: Արանցից առանձնապես արժեքավոր է Ե. Լալալյանի «Վարանդա» աշխատությունը, որտեղ ազգագրական նյութերի հետ ներկայացվում են Արցախի տարրեր գյուղերից գրառված տասնյակ ավանդություններ: Նշված բոլոր պես ստեղծագործություններն գետնոված են Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» (1969 թ.) ժողովածուի մեջ: Արցախյան ավանդությունների գրառմանը և իրատարակմանը լուրջ ուշադրություն է դարձվել նաև հետազայում: Հիշատակության արժանի են Մ. Գրիգորյան-Սպանդարյանի «Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը» (1971 թ.), Ս. Առաքելյանի և Ռ. Գախիանյանի «Նաուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունը» (1978 թ.), Ա. Լիսիցյանի «Լեռնային Ղարաբաղի հայերը» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981թ.), Ա. Դավիթյանի «Արցախ» (Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983թ.), Լ. Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» (1991 թ.) ժողովածուները, որտեղ բանահյուսական այլ ժանրերի հետ տեղ են գտել բազմաթիվ հիմնականում մինչև այդ չգրառված ավանդություններ:

Մեծ են ավանդությունների աղբյուրները ժողովրդական բանահյուսության այլ, հատկապես էպիկական ժանրի մյուս ստեղծագործությունների հետ: Եվ պատահական չէ, որ ժամանակի ընթացքում տեղի են ունեցել փոխանցումներ դրանց միջև, ինչը հիմք է տվել որոշ գիտնականների՝ ավանդությունները նույնացնել այլ ժանրերի հետ¹: Այսպես Տուսի գյուղի «Պրորժկայենց տղանքի մասին պատմվող ավանդությունը» (N 93) բանագիտական գրականության մեջ ներկայացվում է նաև որպես հեքիաթ²: «Հիչերված և ցերեկվա հաջորդականությունը բնորոշող ավանդությունը» (N8թ) հանդես է գալիս «Սիման թաքավորը» հեքիաթի մեջ³ և նույնիսկ գործածվում որպես հանելուկ (Սիմ պատալ կրծե՞՞ ըրը՜կին մին սղժ, մին սիպտակ կըծե՞՞, մինը կըզվում ա, մինը՝ լըտ տամ): Քիչ չէ նաև ավանդությունների վերածված անեկոտների և գրույցների թիվը: Այսօր էլ արցախյան գոյամարտի երկուսերի մասին իրավուն են զանազան իրավուն և չափաանցված պատմություններ, որոնք, անշուշտ, տասնյակ տարիներ հետո կտանան ավանդության արժեք: Որոշ ավանդություններ էլ ժամանակի ընթացքում դարձել են առած-ասացվածքներ, դարձվածներ, օրինանքներ, անհեծքներ՝ իրենց մեջ խտացնելով հարազատ ժողովրդի իմաստությունն ու փիլիսոփայությունը: Այսբանով հանդերձ ավանդություններն ունեն իրենց բնորոշ առանձնահատկությունները, ինչը պայմանավորված է նրանց դերով, որը, ի տարբերություն մյուս ժանրերի, ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջումներին բավարարումն է, այլ նրանց համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ հաղորդելը⁴: Ավանդությունները ստեղծվում և պատմվում են հիմնականում իրենց նյութ դարձած դեմքերի ու դեպքերի,

ստեղծագործություններն ու վայրերի մոտակայքում: Եվ թե՛ այլ ժանրերի ստեղծագործությունների բանասացները պետք է ունենան համապատասխան բնատուր ծիր, ապա ավանդախոսները տարբեր խավերի և տարիքի սովորական մարդիկ են, որոնք երբևէ իրենց լսածն ու տեսածը հաղորդում են խոսակիցներին: Յուրահատուկ է նաև ավանդությունների կառուցվածքն ու ձևը: Դրանց հատուկ է կարծ, պատմողական խոսքը, որը հազվադեպ է ուղեկցվում հարց ու պատասխանով, երկխոսություններով և գերծ է այլ ժանրերի հատուկ կայուն բանաձևերից: Ավանդությունների գեղարվեստական արժեքը հիմնականում պայմանավորված է նրանց տեղում ոճով: Ընդամենը մի քանի նախադասությամբ ավանդախոսները պարզ ու հասկանալի լեզվով ներկայացնում են կյանքի մի պատկեր, որտեղ բավական հաջող բնութագրվում են արտաքին աշխարհն ու ժամանակը: Առավել մեծ է նման ստեղծագործությունների պատմական և ճանաչողական արժեքը: Հաճախ դրանք դառնում են հուսալի աղբյուր պատմագետների, բանագետների և ազգագրագետների համար՝ հնարավորություն ստեղծելով բացահայտելու հարազատ ժողովրդի պատմության, կենսակերպի, կենցաղի, աշխարհայացքի, հավատալիքների այս կամ այն առանձնահատկությունը, լրացնելով գրավոր աղբյուրների բացը, մեկնաբանելով տարբեր ժամանակաշրջաններում ժողովրդի վերաբերմունքն ու զեհատակայն պատմական իրականության, դեպքերի ու դեմքերի նկատմամբ, նպաստելով անհետացած հասարակական որոշ երևույթների հայտնաբերմանը, նրանց ծագման ու գոյատևման համազանցների պարզաբանմանը: Դրան զուգընթաց բազմաթիվ ստեղծագործություններ, տարիներ ու դարեր շարունակ փոխանցվելով սերնդից սերունդ, կորցրել են իրենց հավատարմության արժեքը՝ աղավաղելով ստույգ ժամանակագրությունն ու պատմական փաստերը: Աղավաղումները հատկապես անկառու են այն ստեղծագործություններում, որտեղ փորձ է արվում ստուգաբանել անձնանունները, տեղանունները, երևույթների ու առարկաների անունները: Սիս թե ինչու լեզվաբանները խիստ թերահավատությամբ են ընդունում նման փաստերը: Սակայն որոշ դեպքերում դրանք լեզվաբանական տեսակետից նույնպես կարող են արժեք ներկայացնել. օրինակ, Մարտունու շրջանի Մխտորաշեն (Ալխուտորաշեն) գյուղի անունը շատերը կապում են մխտոր բառի հետ, չնայած գյուղացիների վկայությամբ մխտորը այդ գյուղում լավ չի աճում: Մինչդեռ ավանդությունը պատմում է, որ այդ տեղանքը, շնորհիվ իր գեղեցիկ բնության, սառնորակ աղբյուրի և հանրահայտ սոսի ծառի, երկար ժամանակ եղել է Իրանի շահի անառանցը, որի պատճառով էլ կոչվել է Շահի դուրան չեն (շահի կանգնելու շեն), իսկ հետագայում Շըխուդորաշեն (N 32), ինչը և ժողովրդական ստուգաբանությամբ կապվել է մխտոր բառի հետ՝ ստանալով ներկայիս ձևը: Նման ստուգաբանությունն արդեն լուրջ խորհրդածությունների տեղիք է տալիս:

Հիմք ընդունելով ավանդությունների էությունը՝ Ա.Ղանալանյանը դրանք բաժանում է երեք հիմնական տեսակների⁵.

1. **Ստուգաբանական ավանդություններ**, որտեղ մեկնվում, ստուգաբանվում և իմաստավորվում են անհասկանալի բառերը:
 2. **Բացատրական ավանդություններ** որոնք ընդգրկում են երկնային և երկրային տարրեր մարմինների առաջացումը, կենդանիների ու բույսերի տարբեր հատկություններ, մարդկային ամենատարբեր հարաբերություններ, գանազան երևույթներ, սովորություններ, հավատալիքներ, հանգամանքներ:
 3. **Վարքաբանական ավանդություններ** որտեղ կենսագրական տեղեկություններ և միջադեպեր են պատմվում իրական և մտացածին, հայտնի և անհայտ անհատների կյանքի ու գործունեության վերաբերյալ:
- Արցախյան բանահյուսության մեջ ըստ բանակի գեղարվեստի են ստուգաբանական ավանդությունները: Յուրաքանչյուր քնակիչ փորձում է ստուգաբանել իր բնակավայրի և շրջապատող առարկաների անունները՝ տալով

հիմնականում տեղական, պատմական բացատրություն⁸: Քիչ չեն նաև քա-
ցատրական ստեղծագործությունները, իսկ վարքաբանական ավանդազրույցները
զգալիորեն գիշում են այդ երկուսին: Որոշ ստեղծագործություններ էլ իրենց
էությանը կարող են դասվել և առաջին, և երկրորդ խմբերի մեջ:

Ըստ բնույթի ավանդությունները բանագիտության մեջ լինում են *ազգային*,
միջազգային և *եկամուտ*⁹: Ղրանց մեջ քանակով և պատմական ու ձանաչողական
արժեքով գերակշռում են ազգայինները:

Արցախյան ազգային ավանդությունները սերտորեն կապված են Հայաստանի
այլ վայրերի համանման ստեղծագործությունների հետ, որոնց միջից հառնում է
հայի կերպարը՝ իր բնավորությամբ ու հոգեբանությամբ, կենցաղով, սոցիալ-
տնտեսական հարաբերություններով, հավատալիքներով, սովորություններով
կապված հայրենի բնաշխարհի հետ: Թերևս այդ ստեղծագործությունների մեջ
կարելի է առանձնացնել բուն արցախյանը, որոնց մեծամասամբ ստուգաբանական
ավանդություններ են և մեկնաբանում են այն անուններն ու երևույթները, որոնք
գործածական են միայն Արցախում: Այսպես, Մարտունու շրջանի Հաղորտի գյուղի
մերձակայքում գտնվող *Փղրթուշ ախպիրը* այդպես է կոչվում այն օրվանից, երբ
հովվը ստիպված էր փոխել աղբյուրի հունը և նրա ակի մեջ բրդում (*կըրթուշ*)
պատրաստել (*N 168*):

Հաղորտի շրջանի *Տիզնիսը* (*Ղիզախյալտ*) սարը իր անունը ստացել է այն
ժամանակ, երբ կռապաշտների թագավորը հրամայել է քրիստոնեությունն
ընդունած իր մերձավորներին փայտի նման դիզել և վառել (*N 81.ա*):

Շուշու շրջանի Բերդածոր գյուղի մերձակայքում է գտնվում *Պարին պիժ*
սրբավայրը, որտեղ թաղված է ժողովրդի մեջ տարածված հիվանդությունը
կանխած անանուն մի բժիշկ: Քանի որ, չիմանալով բժշկի անունը, բոլորը նրան
կոչում էին բարի բժիշկ (պարի պըժիշկ), ուստի սրբավայրին էլ տվել են *Պարին պիժ*
անունը (*N 155*):

Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղի բլուրներից մեկը կոչվում է
Հայրունց թումբ, քանի որ Իրանի Ղարաղաղի գավառից գաղթած Հայրունց ազգը
սկզբնական շրջանում այս բլրի վրա է բնակություն հաստատել (*N 105*):

Ասկերանի շրջանի Ղահրազ և հարևան գյուղերում գործածական է *Ղիհրզզճճու*
պէլի դարձվածը, որով կոչում են ճաշկերույթի ժամանակ սեղանի մոտ կանգնած
մարդկանց: Պարզվում է, որ առաջներում Ղահրազ գյուղում հարսանյաց հանդեսի
ողջ ընթացքում թավորը (*պէլիժ*) մնում էր կանգնած հարսանիքը ղեկավարելու
համար (*N 253*):

Արցախյան ավանդությունների մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի
բնաշխարհն ու նրա հետ կապված հավատալիքներն ու պաշտամունքի
առարկաները: Արցախում ևս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության
վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու
ոգեղինացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու
կենդանիները, առանց որոնց անհնար է արցախյան գոյությունը:

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրզը, Մռալն ու
Ղիզախյալտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել
մի շարք ավանդություններում: Լյծմ էլ արցախցի կանայք, ձեռքերը կարկառելով
դեպի այդ լեռները, խնդրում են կատարել իրենց իղձը՝ մեկին պահպանելու, երկար
կյանք պարգևելու, փորձանքներից հեռու պահելու կամ պատժելու: Այսպես, չար
կետուրից ազատվելու համար թշվառ կինը խնդրում է Քիրսին իրեն քար դարձնել,
որը և իսկույն կատարվում է (*N 96.ա*), բաքվեցի հայ կինը հեռու-հեռվից դիմում է
Ղիզախյալտին իր մահամերձ որդու կյանքը փրկելու խնդրանքով՝ խոտանալով
մատաղ անել, և հիվանդը, որի մահը բժիշկները համարում էին անխուսա-
փելի, կազդուրվում է (*N 81.բ*), բնակիչները խնդրում են Մռալին փրկելու իրենց

Քախախց, որը, անչափ բարձրանալով, սուվերի տակ է թողել ողջ շրջակայքը:
Մռավը լսում է խեղիքը և թրով ջարդում ըմբոստ լեռան գլուխը (*N 103*):

Հայրենի լեռների հետ պաշտվում են նաև մի շարք քարեր և ժայռեր, որոնք
դարձել են ուխտատեղիներ: Ղրանց մոտ սղոթում են, մոմ վառում, մատաղ
կտրում:

Հերեր գյուղից վերև լեռան լանջին, կա մի հսկա ժայռ, որի գլորման
սարսափից գյուղացիները ստիպված են եղել տեղափոխվել ներքև և կառուցել նոր
տներ¹⁰: Երկուրը ստիպել է բնակիչներին պաշտել այդ ժայռը, որպեսզի չգլորվի և
չափերի գյուղը:

Գյուլնե Ճարտար գյուղում է գտնվում *Շմանեքը* երեք ժայռերից կազմված մի
ամբողջություն, որոնց միջև կա երկու խորշ: Այդ խորշերով անց են կացնում
կատարած անասուններին, որպեսզի խելոքանան¹¹:

Խնձրիստան գյուղի մոտ է գտնվում *Սուլուլ քարը*: Ավանդության համաձայն դա
քարացած մի կին է երեխան գրկին, որը, ձգտելով ազատվել իրեն հետապնդող
թշնամներից, խնդրել է Աստծուն՝ իրեն քար դարձնել (*N 119.ա*): Սեկ այլ
տարբերակի համաձայն կինը բողբոջ է Աստծու դեմ դաժան ճակատագրի համար,
որի պատճառով Աստված զայրացել և նրան քար է դարձրել (*N 119.բ*):

Առանձնակի պաշտամունքի առարկա են ծծաքարերը, որոնցից իր գործությամբ
հայտնի է Խերխան գյուղի մերձակայքում գտնվողը: Այն հեռվից ծծկեր երեխային
կերակրող կնոջ տեսք ունի, որի ծծերից կաթ-կաթ ջուր է հոսում: Սակավակաթ
կանայք այդտեղ աղոթում են, մոմ վառում, այդ ջրից քսում իրենց կրծքերին, և կաթը
իսկույն առատանում է: Ոմանց պատմելով այստեղ ժամանակին ապրել է Խերխան
թագավորի չքմաղ դուստրը Շուվիկը, որը, չցանկանալով թշնամիների ձեռքն
ընկնել, ինքնասպան է եղել: Չար թշնամիները կտրել են նրա ծծերը և դրել ժայռի
վրա, որից Աստծու գործության սկսել է կաթնաջուր հոսել¹²: Սեկ այլ ավանդության
համաձայն մի անխիղճ մայր այս ժայռի մոտ արձակել է իր ծծկեր երեխային և
փախել: Աստված ժայռին ծծեր ու կաթ տալու շնորհք է պարգևել, որ երեխան
սովից չմեռնի (*N 96.բ*): Իսկ ոմանք էլ ասում են, որ այդ ժայռը ժամանակին չար
կետուրից հալածված մի հարս է եղել, որը, այլևս չցանկանալով վերադառնալ
կեսուրի մոտ, խնդրել է Քիրսին՝ իրեն քար դարձնել (*N 96.ա*):

Նման ծծաքարեր կան տարբեր գյուղերում:
Հայտնի են նաև մի շարք քարեր, որոնցից յուրաքանչյուրը պաշտվում է՝ որպես
մի որոշ հիվանդության բժշկող: Որոշ քարեր էլ, թեև չեն պաշտվում, բայց հայտնի
են իրենց շուրջը ստեղծված ավանդություններով:

Հաղորտի գյուղի մոտ գտնվող *Ավանա քարը* հայտնի է նրանով, որ այստեղ
Ավան Յուզբաշչին և Թաղխան հարյուրասպետը հաղթել են պարսիկներին այս քարի
վրա արձանագրելով հաղթանակի պատմությունը (*N 98*):

Գտիչ բերդը և Թաղտու գյուղը բաժանող ծորում կա մի հսկա քարակույտ
Կուսում քարեր, որը ըստ ավանդության հավաքել են Բուղայի զինվորները
ցանկանալով ծորը լցնել քարերով և ձանաղաքի բացել բերդը գրավելու համար (*N*
97):

Նման մի քարակույտ էլ կա Աստղաշեն գյուղի մերձակայքում անտառի մեջ, որ
կոչվում է *Խէխումծ*: Մի անգամ այստեղ մի հարս խեղդել է յուր սկեբորջը:
Սովորության համաձայն գնացող-եկողը երեք քար է նետում պատակի սպանված
տեղը, որից և գոյացել է քարաբլուրը (*N 120*):

Արցախում մնում են նաև ջրի պաշտամունքի մնացուկները, մի քանի
առչյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդությունների բժշկող:
Ղրանցից մի քանիսը ամենայն տեսակ, իսկ մյուսները միայն որոշ
հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում: Մինչև այժմ էլ
սղոշվում է Գյուլնե Ճարտարի *Ղավաջիչնձ ախպիրը*, որը համարվում է մուղբոր
կիվանդության բժշկող: Հիվանդները, ինչպես հնում, աղբյուրի առջև մոմ են վառում,

աղոթում և լողանում կամ վճացվում ժայռի մեջ փորված ջրափոսի մեջ: Նրանց համար, ովքեր ի վիճակի չեն բարձրանալ աղբյուրի մոտ, ջուր են տանում, սակայն այդ դեպքում չպետք է հետ նայել կամ ջրի ամանը գետնին դնել, այլապես ջուրը կկորցնի գորությունը:

Որպես անեն տեսակի հիվանդությունների բժշկող՝ հայտնի է Հաղորտի գյուղի *Չըրափուր ախպիրը*, որին այցելելով՝ հիվանդները այդ ջրից խմում և քսում են իրենց մարմնին ու կազդուրվում (N 165):

Դիզաբայտ լեռան ստորոտի գյուղերում մեծ համբավ ունի լեռան վրա գտնվող *Արչին ախպիրը*: Ավանդությունը¹¹, ըստ որի աղբյուրը բխել է ծաղափից տաշտովող առջի՝ երկնքին ուղղված խնձրանքի արդյունքում, հիմա էլ պատմվում է այդ գյուղերում: Պաշտվում է նաև աղբյուրից վերև գտնվող քարայրը, որտեղ կայծակը խոցել է արչին (N 167):

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ: Գողտրիկ մի պատմություն է խաչմաշ գյուղի *Կոյր ախպիրի* մասին պատմվող դեպքը: Ջուր վիշապը կուլ է տալիս ջրի մեծ աղջկան: Նրա մահը սգում է սիրած տղան և անհիծում:

Չորանաս, աղբյուր, կուրանաս, աղբյուր, - ինչը և կատարվում է¹²:

Մյուս տարբերակի համաձայն երիտասարդ հովվիը մորթազգեծ է անում մի կով և կաշվով փակում վարար աղբյուրի հունը, որպեսզի կարողանա հանել սիրած աղջկա դիակը, բայց ինքն էլ խորտակվում է: Հետագայում, երբ ժողովուրդը բացում է աղբյուրի հունը, այն արդեն ցամաքած (կուրացած) էր (N 181.բ): Մեկ այլ վարկած էլ պատմում է, որ այստեղ խեղդվել է կռապաշենի առաջնորդի աղջիկը: Կատաղած առաջնորդը հրամայել է քարերով լցնել աղբյուրը և կուրացնել (N 181.ա):

Հացի գյուղում է գտնվում *Անահիտին ախպիրը*: Ժողովրդի պատմելով՝ այս աղբյուրի մոտ է վաչագան թագավորը առաջին անգամ հանդիպել իր ապագա կնոջը՝ Անահիտին¹³: Նույն ավանդությունը պատմվում է նաև Չլորան գյուղի մերձակայքում գտնվող համանուն աղբյուրի մասին (N 170):

Հետաքրքիր է Կաղարծի գյուղի տարածքում գտնվող *Հաց ախպիրի* պատմությունը¹⁴: Այն սկզբում կոչվել է Թարխան աղբյուր բխեցնողի որսկան Թարխանի անունով: Հերթական անգամ, երբ որսկանը ցանկանում է հագեցնել ծարավը, մի ագրավ մի քանի անգամ իրեն մետում է աղբյուրի ակը՝ պղտորելով ջուրը: Ջայրացած որսկանը կրակում ու սպանում է ագրավին և հետո միայն նկատում, որ օձը թույնը թափել է ջրի մեջ: Խիստ զղջալով արածի համար՝ Թարխանը ճաշկերպի է հրավիրում իր անապատացիներին և, պատմելով իր երախտամոռության (նամարդության) մասին, խնդրում աղբյուրի անունը փոխել և դնել *Նամարդի ծար*: Աղբյուրը ստանում է երկու անուն՝ *Թարխան ախպիր* և *Նամարդի ծար*: Հետո ավելանում է նաև երրորդ անունը՝ *Հաց ախպիր* Կաղարծիից Հացի գյուղ տանող ճանապարհին գտնվելու պատճառով:

Որոշ ավանդություններ են պահպանվել նաև այլ ջրերի մասին: Բայուջա գյուղի գետը կոչվում է *Մղղրափետ*, քանի որ մեղուները բույն էին դրել նրա ակի մեծ ծառի վրա, որտեղից մեղուր հոսում էր և լցվում գետը (N 176):

Ամենք գյուղի մոտ գտնվող լճակում խեղդվել է մի ջահել աղջիկ: Ազավոր մայրը անհիծել է, որի հետևանքով ջուրը սևացել և ստացել է *Ալվ ծով* անունը (N 180):

Հուզիչ է Թարթառի հովտում եղած *Էշի արխի* մասին եղած ավանդությունը, գեղեցկուհին այսպես է դնում իրեն սիրո առաջարկությամբ դիմած երկու երիտասարդների մասը. կամուսնանա նրա հետ, ով առաջինը կկարողանա ջուր հասցնել մինչև իր հոր պալատը: Ջիվանշիրի մեկից որդին, տեսնելով, որ համառավորը՝ խաչենի մեկից որդին, աշխատանքն արդեն ավարտում է, դիմում է խարդախության. Թարթառ գետից մինչև աղջկա հոր բերդը կտավ է մեկնում, որը, արևի տակ փայլելով, հեռվից հոսող ջրի տապավորություն է թողնում: Տեսնելով «հոսող

ջուրը»՝ խաչենի մեկից որդին հանկարծամահ է լինում: Ժողովուրդը խաբված կլիտասարդին կոչում է էշ, իսկ առում է *շի արխ*¹⁵:

Արցախում յուրանատուկ է նաև բույսերի և կենդանիների պաշտամունքը: Ռատապաշտության մեջ նախապատվությունը տրվում է պրեռչնի (բոնչենի) ծառին, որին կարելի է հանդիպել կալատեղերում, գերեզմանոցներում, սրբավայրերում: Հատկապես պաշտվում են այս վերջինները, քանի որ ժողովրդի մտածողությամբ և կտուր գորությունը տված է սրբերին և նրանց մոտ գտնվող ծառերին: Գրեթե յուրաքանչյուր գյուղ ու սրբավայր ունի նման ծառեր, որոնց հանդեպ խոր հավատով են լցված բոլոր բնակիչները: Մեծ մեղք է համարվում սրբազան ծառերը կամ նույնիսկ նրանց փոքր ձյուղերը կտրելը, հանդգնողը ժողովրդի դատողությամբ անապայման պատժվում է:

Հաղորտի շրջանի Պեթանց գյուղի եկեղեցու բակի մեծ պռշնենու մասին ասում են, որ մի անգամ գյուղի պատանիներից մեկը համարձակվել է բարձրանալ ծառը և պարսատիկի համար երկձուր կտրել: Սակայն իջնելուց ընկել է ժայռի վրա և իսկույն մահացել: Հետագայում մահացել են նաև նրա եղբայրները և բույրերը: Պատահական չէ, որ մինչև հիմա ոչ ոք չի համարձակվում օգտագործել անգամ ծառի չորացած և թավկած ձյուղերը, դրանցով միայն մատաղ են եփում, կամ ծերունիները այքի ուլունքներ են պատրաստում նորածինների համար (N 130): Նույն գյուղի մեկ այլ սրբավայրի՝ *Արիսատուկի* մասին պատմում են, որ գյուղի գավակ չունեցող բնակիչներից մեկը Աստուռ պատվերով մի գերեզմանաքար է տանում և կանգնեցնում այդտեղի թեքնի տարբեր ծառի տակ, և ինը ամիս հետո նրա ընտանիքում տղա է ծնվում: Այի գյուղացի համազուլացիների բնորոշմամբ խելքը հացի հետ կերած մի հայ, անտեսելով պաշտամունքը, սուրբ ծառի կայծակից չորացած և ընկած ձյուղը կտրտում և օգտագործում է տան կարիքների համար, որի պատճառով էլ նրա աջ ձեռքը չորանում է (N 137): Բացի պռշնուց և թեքնուց պաշտվում են նաև կաղնին, սոսին, ձապկին, ընկուզենին, տանձենին և այլ ծառեր: Այդ ծառերի տակ մատաղ են անում, մորթված անասունի կամ անլորի գլուխն ու ոտքերը դնում ծառի փչակում, մոմ վառում, թաշկինակ կամ հագուստի մի կտոր կապում ծառի ձյուղին և վերադառնում: Նման ծառերը չորանալուց հետո էլ մնում են՝ որպես պաշտամունքի արարկա: Դրանց փտած ձյուղերի փոշին, որ կոչվում է *խնոթուն*, ջրի մեջ լուծում և լվում են հիվանդություններից զերծ մնալու համար:

Ավանդություններ կան նաև սովորական բույսերի մասին: Ըստ դրանց բամբակը բուսել է կավի մնացորդներից, որից աստված կերտել է մարդուն, խաղողը առաջացել է Նոյ մահապետի մատուցած զրի ոսկորներից¹⁶:

Հետաքրքրական է խաղողի վազի մասին եղած պատմությունը. ժամանակին խաղողի որթը մի սիրուն, ուղիղ ձյուղերով թուփ է եղել, որի պտուղներից առաջին անգամ գինի ստանալով՝ մարդիկ խմել են և հարբելով խաղողի ձյուղերը ծուռուծուռ կապկապել, որից և վազը ստացել է ներկայիս տեսքը (N 184):

Թեքնին ու թեքենին աճել են մի կնոջ կրծքերից, որը մեռնելիս պատվիրել է և կտնուս տիրություն անել իր մանուկներին: Աստված մոր կաթը թուփ ու թուփ է դարձրել, երեխաները սնվել ու մեծացել են¹⁷:

Հասկը ժամանակին բերքառատ է եղել ամբողջ ցողունը պատած հատիկներով: Մի կին հանգձել է հացի լավաշով սրբել երեխայի կեղտը, Աստված զայրացել և հասկից թողել է միայն ցողունը: Բայց, խղճալով սովից ոռնացող շներին, թույլատրել է ուսակին քիչ բերք տալ (N 185):

Թեքուններից ամենից տարածվածը ծիծեռնակի պաշտամունքն է, որի մասին եղած ավանդությունները այժմ էլ տարածված են տարբեր գյուղերում: Մի պատմության համաձայն օձը պատվիրում է լվին խայթել բոլոր կաթնասուններին և տեղեկացնել, թե որի արյունն է ամենաքաղցրը: Ծիծեռնակը, իմանալով, որ լուն ամենաքաղցրը մարդու արյունն է համարել և պատրաստվում է այդ մասին հայտնել ռձին, կտցում և պրկում է լվի լեզուն: Օձն էլ փորձում է խայթել ծիծեռնակին, բայց

հասցնում է միայն պոչի մեջտեղից կծել, որի պատճառով էլ ժիծեռնակի պոչը մնում է մկրատած¹⁸։

Մի այլ ավանդություն վկայում է, որ ժամանակին մի խորթ մայր, կեռծ հիվանդանալով, պատվիրել է ամուսնուն կտրել երեխայի ճկույթը, եսել և բերել իրեն։ Պահանջը կատարելուց հետո ճկույթը ժիծեռնակ է դարձել և թռել (N 186.ա)։ Մեծ մեղք է համարվում ժիծեռնակին սպանելը, անգամ նրա բույնը քանդելը, թեկուզ այն լինի տան մեջ կամ նույնիսկ օջախի գլխին։ Ժողովրդի կարծիքով ժիծեռնակի բույնը քանդողի տունը անպայման կավերվի։

Ավանդություններ պահպանվել նաև այլ թռչունների մասին։ Ազոսվի մասին ասում են, որ մի անգամ, տեսնելով, որ ուխտագնացության եկածների մատաղի կաթսայի մեջ օձ է մտել, չի կարողանում հասկացնել հավաքվածներին և ստիպված իրեն նետում է թունավորված կաթսան փրկելով մարդկանց (N 199.ա)։ Մի այլ պատմության համաձայն ազոսվը ժամանակին մի վատ կին է եղել, որը կաշառվելով մահացած քրոջ աղջկան հանձնում է թագավորի մարդկանց, որ դենն կառուցվող բերդի պատի մեջ, որպեսզի այն չփլվի։ Մահացող աղջիկը վեոջին շնչում անիծում է մորաքրոջը, և վերջինս դառնում է սև ազոսվ։ Ասում են մինչև հիմա էլ ազոսվը պատ տեսնելիս կանգնում է վրան և փորձում կտուցով քանդել, իբրև գիտակցել է սխալը և ցանկանում է հանել քրոջ աղջկան (N 199.բ)։

Սողուններից կատվում է լորտուն (լօկը)։ Ժողովրդի հավատամքն լորտուն հայ է, իսկ օձը՝ թուրք։ Պատահական չէ, որ լորտուն միշտ սպանում է հանդիպած օձին, որպեսզի վեոջինս հայերին չխայթի։ Պաշտվում է նաև տան օձը, որը համարվում է *դժվանք* (հաջողություն բերող)։ Իշխում է այն կարծիքը, որ, եթե շահմար օձը մեկի բերանում քթի, վեոջինս իմաստուն կդառնա։ Նման պատվի արժանացել է *Օլլի Փիրուկ* (N 222)։ Օձերը տարին մեկ փոխում են իրեն շապիկը (հալավը)։ Այդ շապիկը մարդիկ դնում են հացի մեջ և ուտեցնում երեխաներին, որ ձեռքերի գորտնուկը անցնի, կամ պահում են գլխարկների մեջ, որ ուրիշ օձեր չմտնեան։

Կաթնասուններից կատվի մասին ասում են, որ նա Քրիստոսի թաշկինակն է։ Իբրև մի անգամ Հիսուսը իյուրընկալվել է մի տան և, տեսնելով, որ մկները խանգարում են ձաշել, հանել է թաշկինակը, խաչակնքել և արծակել։ Այն իսկույն կատու է դարձել և հալածել մկներին (N 274)։ Կատուն համարվում է սուրբ, նրան սպանելը մեծ մեղք է իզուր չեն ասում։

- *Հու վեր մին կատու ըսպանե, բեդմա օխտը լը խժե շինի, հանցու մեխկա միզվի։*

Հայ ժողովրդական հավատալիքներում գզալի տեղ ունի արջի և գայլի պաշտամունքը¹⁹, որի մնացուկները գոյատևում են Արցախում։

Մի ավանդություն համաձայն արջը ժամանակին աքոջ ժամանակին աքոջ ջրադացական է եղել։ Մի անգամ նա գողացել է բազմազավակ որբայրու այլուրի մի մասը և վեոջինիս անծօքով դարձել արջ (N 275)։ Հուգիչ պատմություն է Պղտկես պեթք եկեղեցու բակում թաղված արջի մասին եղած ավանդությունը։ Երեխտապարտ արջը կամովին գնում է վանք և օգնում իր վերքը բուժած տերտերին եկեղեցու կառուցման համար քարեր կրելով։ Հերթական անգամ հեռվից քար բերելով նա իր փրկիչին մետած է գտնում և, վշտից գլուխը խփելով հանգուցյալի տապառաքարին, ինքնասպան լինում։ Արջին թաղում են եկեղեցու բակում, որը և դառնում է սրբատեղի։ Չբեր կանայք չոքեչոք պտտվում են արջի գերեզմանաքարի շուրջը, Աստված ասում է՝ պըտկըվիս, չքակիք, և նրանք պտտավորվում են։ Այստեղից էլ ժողովրդի ստուգաբանությամբ առաջացել է վանքի անունը (N 150)։ Նմանատիպ մի գերեզման էլ կա Խանաբաղ գյուղի մերձակայքում՝ Նրիառակ տեղանունով։ Ասում են այստեղ մի գայլ է թաղված, որը սնել և պաշտպանել է գաղթի ժամանակ մորը կորցրած մի մանկան (N 157)։

Էշի մասին ասում են, որ անհավատ է եղել, գնացել է Աստու մոտ և, ընդունելություն չգտնելով, ստիպված դիմել է կաթնակին։ Վերջինս էլ խփել և կտրել է ազին²⁰։ Մի այլ ավանդություն ներկայացնում է եզան և էշի հավատարմությունը, խեղճ աղանա որդին խնդրում է կենդանիներին՝ օգնել իրեն։ Միայն էշն ու եզն են

մուռեմուն նրան և ընկերանուն։ Այդ օրվանից մարդը իր հավատարիմ ընկերներով կրվում է քարի ու հողի հետ²¹։

Երկնային լուսատուներից պաշտվում են հատկապես արևն ու լուսինը։ Հիշտ է դրանց առաջ այլևս ծունր չեն իջնում և չեն աղոթում, ինչպես առաջներում, բայց չառունակում են դրանցով երդվել։

- *Էն մըղ վը, թա էտ պեճը ըրած ինին, էն լուսինիզան ինձ քուռըցնե, թա սը՛տ ինին։*

Շեր կանայք երբեմն դիմում են այդ լուսատուներին՝ խնդրելով պահապան լինել իրենց հարազատներին։

Ասում են արևը մի վախկտ և ամաչկտ աղջիկ է եղել, գիշերը վախեցել է շրջել, գիշերը ամաչել։ Մայրը ստիպված տվել է մի փունջ անեղ, որ իրեն նայողների ույքերը խոցի։ Մինչև հիմա էլ արևը, նստած մի առյուծի մեջքի, ձեռքին ասեղների փունջը, շրջում է երկնքում։ Երբեմն քաջքերը հարձակվում են, որ գողանան աղջկան։ Այնը տխրում և խավարում է, որի պատճառով առյուծը հարձակվում և հաղթում է քաջքերին, իսկ մարդիկ ներքևից հարայ-իրոց են բարձրացնում, հրացան կրակում և ուզատում աղջկան (N 7)։ Պատմում են նաև, որ չարածճի լուսինը մի անգամ խանգարել է մորը խմոր հունցելիս, մայրը խմորուտ ձեռքով ապսպարել է նրա երեսին, և այդ հետքերը մինչև հիմա մնում են (N 2)։

Աստղերի մասին ասում են, որ դրանցից յուրաքանչյուրը լույս աշխարհ է գալիս մի մարդու ծննդյան հետ և մեծնում (ծըլլում) նրա մահվան ժամանակ։ Մեծ մարդկանց աստղերը մեծ են, փոքրերինը՝ փոքր, նամուսով մարդկանց աստղերը պարզ են, աննամուսներինը՝ աղոտ (N 3)։

Ավանդություններ կան նաև Հարդագողի ճանապարհի, կայծակի, անծրևի, որդու, գիշերվա ու ցեղեկվա, օրվա, երկրաշարժի մասին։

Մի շարք ավանդություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի և հատկապես Քրիստոսի հանդեպ ունեցած մեծ հավատը, կրակաշատների զորավարը, տեսնելով սպանված քրիստոնյա գեղեցկուհու վրա երկնքից իջած լույսը, իր զինվորների հետ ընդունում է նրա կրոնը (N 87.ա), թուրք քույր և եղբայր, զարմանքով նկատելով օդի մեջ կանգնած և աղոթող վարդապետին, ուրանում են հարազատ կրոնը դառնալով քրիստոնյա, որի պատճառով էլ հետապնդվում են թուրքերի կողմից և սպանվում²², ամուլ արար կինը ուխտի է գալիս հայկական վանքը և, գավակ ունենալով, մկրտվում ու դառնում քրիստոնյա, և երբ արաբները ուզում են սպանել կնոջն ու երեխային, Քրիստոսի հրամանով օձերը խայթում են նրանց և ազատում մորն ու մանկան²³, հուլիվը, հրամարվելով Քրիստոսին կաթ տալուց, նրա անծօքով իր հոտի հետ քարանում է (N 177), Քրիստոսը գայրանալով անիծում է ջրուն, և վեոջինս գրկվում է պտղաբերելու հնարավորությունից (N 273)։

Արցախյան ավանդություններում մեծ արձագանք է գտել նաև ժողովրդի ներքին կյանքը գբաղմունքը, կենցաղը, հասարակական հարաբերությունները։ Ձբաղմունքներից հատկապես արտացոլվել են երկրագործությունը, անասնապահությունը, արհեստագործությունը, այգեգործությունը, որսորդությունը, որոնք կենսական մեծ նշանակություն ունեն արցախցու կյանքում։ Կենցաղային ավանդությունների մեջ տեղ են գտել մի շարք սովորույթներ, հարաբերություններ, ծեսեր, ինչպիսիք են՝ աղբյուրը ջրի գնալու սովորույթը, հարսի հարաբերությունները կեսուրի, կեսրայի և ամուսնու մյուս հարազատների հետ, ժողովրդի մեջ կատարվող արտադրությունները և այլն։ Իրենց քանակով և բովանդակությամբ նշանակալից են սիրո և ամուսնության մասին եղած ստեղծագործությունները, որտեղ արտացոլվում են կնոջ իրավագուրկ և ճնշված վիճակը, երիտասարդ տղաների և աղջիկների կախվածությունը ծնողներից և բազմաթիվ այլ հանգամանքներ։ Պարեր չարունակ ազատ սիրուն և ամուսնությամբ խոչընդոտել են սիրող զույգերի սոցիալական տարբեր ծագումն ու հասարակական դիրքը, ինչպայն դրությունը ստիպելով սիրահարներին զաղտնի հեռանալու հայրենի

օջախներին, ինչն և հաճախ ոճրագործությունների և որբերությունների տեղիք է տվել: Այսպես, Դիզակի Բայանդուր իշխանը, իմանալով, որ իր գեղեցկուհի դուստրը՝ Վարդիթերը, սիրահարված է հովիվ Արսենին և որոշել է փախչել նրա հետ, կրակում և սպանում է երկուսին էլ²⁴. Վանք գյուղի բեկի աղջիկը Հուռունը, անտեսելով հոր կամքը, փախչում է սիրած տղայի հետ և բնակվում գյուղից հեռու անմարդաբնակ մի վայրում, որտեղ և հոշոտվում է զուգանների կողմից: Հետագայում այդ վայրում գյուղ է հաստատվում, որն էլ Հուռունի հիշատակին կցվում է *Հուռունեն թաղ*, իսկ հետո Հուռաթաղ (N 52.գ): Սակայն միշտ չեն ծնողները պարտադրում իրենց կամքը զավակներին, երբեմն նրանք տեղի են տալիս հարգելով անկեղծ զգացմունքները: Մի ավանդության համաձայն Դիզակի մեկից Մաջունը չի ընդդիմանում իր մինուճար արջկա Գայանեի սիրուն և նրան ամուսնացնում է ծառա Գագիկի հետ մեկիթությունը կտակելով վերջինին (N 225): Նարեշտար գյուղի անունը ստուգաբանող ավանդության մեջ քուրդ բեկի մինուճար աղջիկը, հակառակ հոր կամքին, փախչում և ամուսնանում է իրենց տան հայ ծառա Առտամի հետ: Հետագայում հայրը ներում է առջկան տալով մեծ օծիտ և ծառաներ (N 63): Սրտառուչ մի պատմություն է Մեծ Թաղար և Տող գյուղերի խաչձերուկում գտնվող *Արզունան վանքի* մասին եղած ավանդությունը. ռուս զինվորները իրենց հետ Ռուսաստան են տանում կռվի ժամանակ ծորը կորցրած մի հայ մանկան Արզունան անունով, որը, կրթություն ստանալով և մեծ հարգանքի արժանանալով, դառնում է գեներալ: Կերադառնալով Շուշի նա ամուսնանում է իրենից տարիքով մեծ մի հայ կնոջ հետ: Մի օր էլ ամուսնու ոտքերը լվանալիս կինը տեսնում է նրա մտքի նշանը և հեծկտալով ուշաթափվում. պարզվում է՝ ամուսինները մայր և որդի են, որոնք տարիներ առաջ կորցրել են իրար: Խոր հիասթափություն ապրելով՝ նրանք այդ ամենը պատմում են տեղիտեղին, որն էլ խորհուրդ է տալիս մեղքերը քավելու համար մի եկեղեցի կառուցել և մեջը աղոթել, ինչը և սիրով կատարում են (N132): Նման դեպք է կապված Տուսի գյուղի մերձակայքում *Իջակ* գետի վրա, գտնվող կամուրջի կառուցման հետ, քոյր ու եղբայր, մանկուց իրար կորցնելով, օտարության մեջ հանդիպում են և, անտեղյակ իրականությանը, ամուսնանում: Տարիներ հետո, պատռվ կնոջից իմանալով եղելությունը, նրանք դիմում են Գտիչ վանքի տեղիտեղին մեծ մեղքը քավելու խնդրանքով, և նրա խորհրդով մի թանկարժեք նվեր-հիշատակ են թողնում հայրենի գյուղի ժողովրդին. կառուցում են այդ կամուրջը (N 92):

Մի շարք ավանդություններում արծարծվել են օտար բռնակալների արարքների, պարսիկների, թուրքերի, թաթարների նվաճողական նկրտումները, կատարած ավերածություններն ու թալանը և արցախցիների անգիջում պայթարը նրանց դեմ: Օտտ ավանդության *Հաղորդի* շրջանի գյուղերից մեկը ստացել է *Թեգխարաթ* (հաճախակի փչացող) անունը, քանի որ այդ տեղով անցնող օտար բռնակալներից յուրաքանչյուրը ավերել և թալանել է այն (N12): Որոշելով իմնահատակ ավերել Ամարասի վանքը՝ Լենկ Թեմուրը հրամայում է զորքին շարվել մինչև Արաքս և, վանքի քարերը ձեռքից ձեռք փոխանցելով, լցնել գետը²⁵: Օտար բռնակալներից հատկապես հիշատակվում են Լենկ Թեմուրի, Բուղայի, Փանահ խանի, Իբրահիմ խանի անունները: Օտար բռնակալներին զուգընթաց ժողովուրդը ավանդություններում կերտել է իր հայրենասեր ու քաջարի զավակների կերպարը: Իրանի արչա Մահմադ շահի թիկնապախը Սնփարալիթգը, տեսնելով, թե ինչպես են պարսիկները Շուշիում հայերին կոտորում, անպատվում և զազանաբար սպանում հղի կանանց, այլև չի համբերում և զիջելու սպանում է շահին ինքն էլ նահատակվելով: Հետո պարզվում է, որ վրիժառու ազգությամբ հայ է, որը մանուկ հասակում գերի է տարվել Պարսկաստան և դաստիարակվել պարսկական ոգով²⁶: Սակայն, ականատես լինելով հայրենակիցների նախճիրին, նրա մեջ արթնացել է հայ քրիստոնյայի ոգին, ինչպես արցախցիներն են ասում՝ *արունը ծիծ է տրվալ*. Հակոբ անունով մի մանուկ Ասկերանի շրջանի գյուղերից մեկից գերի է տարվում

Լրան և որդեգրվում Ամիրխան անունով մի մեծավորի կողմից՝ ընդունելով դարսկական կրոնը և մկրտվելով *Փառուխ* անվամբ: Հետագայում նա մեծ հարգանք է վայելում Իրանի շահի կողմից և նշանակվում բարձր պաշտոնի: Բայց կրիստասարդը ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ իր ծնողներին, հայրենի լիությունը և մի օր էլ, թողնելով ամեն ինչ, ծածուկ փախչում է հաստատվելով Շուշի քաղաքում, որտեղ կարճ ժամանակում ձեռք է բերում մեծ հեղինակություն: Այս թե ինչու ժողովուրդը նրա անվամբ է կոչում հայրենի գյուղը²⁷:

Արցախցին առանձնապես վրիժառու է դառնում, երբ փորձում են պղծել նրա ոտրը զգացմունքները: Նման մի հուզիչ պատմություն է ներկայացնում Ճարտար և Աու գյուղերի մոտակայքում գտնվող *Դիշա վանքի* մասին եղած ավանդությունը. օտար բռնակալ Խօշանբազը, չբավարարվելով կատարած ավերածություններով և կողոպտաով, օրենք է սահմանում, որի համաձայն իրեն է վերապահվում յուրաքանչյուր Սոր ամուսնացող աղջկա հետ առաջին գիշերն անցկացնելու իրավունքը: Կտորձ երիտասարդ եղիչեն ժողովրդի հավատամամբ Գրիգոր Կուսավորչի թոռը, չկարողանալով տանել նման անպատվությունը, հարսի շորերով ներկայանում է բեկին և զիջելը խողխողում նրան ինքն էլ նահատակվելով և Լուսազայում իր անունը կրող վանքի տեղում (N 137):

Առանձնակի շարքով են ներկայանում Թևան Ստեփանյանի մասին պատմվող ավանդությունները: Նշանավոր հայդուկապետը իր ամբողջ կյանքը նվիրել է արտաքին և ներքին թշնամիների դեմ մղվող պայքարին: Մի ավանդության մեջ իր փոքրաթիվ քաջերով նա հաղթում է թուրքական զորքին՝ կանխելով արյունահեղությունն ու թալանը (N 220.դ), մի այլ դեպքում գնդակահարում է հայ կնոջ պատվի հանդեպ ունձուրթյուն կատարած իր զինվորին (N 220.ա), մի ուրիշ դեպքում ծեծում է հայ զոհուցան, որը համարձակվել է գովել սպանված թուրքի արտաքին գեղեցկությունը (N 220.բ):

Վազ գիողնցէք, թօրքը հինչ էլ ինի, հային վճտանը տակէ ցըխըն էլ չնրժի. - այսպես է խրատում ազգային հերոսը իր հայրենակիցներին:

Նման վարքաբանական ավանդություններ կան Թուլի-Արզունանի²⁸, Հոբ Երանելու²⁹, Խրիմյան հայրիկի³⁰, Վանի Յուզբաշու³¹ և այլոց մասին:

Սակայն միշտ չէ, որ արցախցին կարողացել է զինված պայքար մղել թշնամու դեմ, երբեմն նա բռնակալներին հակադրվել է իր ստեղծագործ և շինարար ոգով՝ ապավինելով Աստծո և սրբերի գորությանը: Մի ավանդության մեջ պատմվում է, թե ինչպես Լենկ Թեմուրը, խոճի խաչը զգալով, թուլատրում է չկոտորել այնքան հայ, որքան կտեղավորի տեղի եկեղեցին: Մարդիկ, մտնելով եկեղեցին, գաղտնի Խունդունով փախչում են անտառը և ազատվում (N 142): Զկարողանալով գրավել Վոլիչ բերդը՝ արաբ զորավար Բուղան ավերում է հայկական սրբավայրերը: Նույն ժամանակ կռիվ թե՛ պահին, հայերը կառուցում են նոր եկեղեցի նրան տալով *Թիժ դիխցէ* անունը (N 133): Պողոսան Գոմեր գյուղում ժամանակին մի մեծ փոս է եղել, որտեղ թշնամիների հարձակումների ժամանակ թաքնվում էին կանայք ու երեխաները և փրկվում: Հետագայում, երբ խաղաղություն է տիրում, ժողովուրդը ամենքին փրկող այդ փոսի տեղում եկեղեցի է կառուցում այն անվանելով *Սնճնափորկիչ* (N 147):

Կերոհիչյալ ազգային ավանդությունների կողքին տեղ են գտել նաև միջազգային և եկամուտ որոշ ստեղծագործություններ: Միջազգային ավանդություններից, որոնք իրենց զուգահեռներն ու տարբերակներն ունեն մի շարք ժողովուրդների մոտ, Արցախում լայն տարածում ունի համաշխարհային ցիլեղեղի մասին եղած պատմությունը, որի համաձայն Նոյ նահապետը, Կոնխազգալով գալիք մեծ ջրհեղեղը, շինում է մի տապան և իր ընտանիքով ու կենդանիներով տեղավորվում նրա մեջ (N 9): Նման բնույթ ունի նաև տարբեր չինվածքների փյուզումը կանխելու նպատակով շինվածքի մեջ կենդանի վիճակում մտրդ թաղելու պատմությունը (N 199.բ):

Եկամուտ ավանդությունները փոխառություններ են հայ ժողովրդի հետ պատմական այս կամ այն դարաշրջանում տարբեր շփումների մեջ գտնվող ցեղերի ու ազգերի բանահյուսությունից: Դրանցից են աստվածաշնչյան տարբեր ժողովրդական ավանդություններ, խիկար իմաստունու, Լողմանու, Լեռն-Թեմուրի մասին պատմող որոշ պատմություններ, որոնց մի մասը, ժամանակի ընթացքում վերամշակվելով, տեղայնացվել է ծովվել է ազգային ավանդություններին:

Եվ այսպես հարատևում են արցախյան ավանդությունները որպես հարազատ ժողովրդի հազարամյակների պատմության խոսուն փաստեր, նրա ինքնության ու անաղարտության լիարժեք վկաներ:

1. Տես Ա. Դանալանյան, Ավանդապատում, 1969, էջ ԺԵ-ԻԲ
2. Տես Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. 5, 1966, էջ 675
3. Տես Նույն տեղը, էջ 29
4. Տես Ա. Դանալանյան, նշվ. աշխ. էջ ԻԳ
5. Տես Նույն տեղը, էջ ԻԸ-ԻԹ
6. Տես Ա. Ղազիյան, Լեռնային Դարաբաղի բանահյուսությունը 1970-1973 թթ. գրառումների հիման վրա, Պատմաբանասիրական հանդես, N3, 1974 թ., էջ 237
7. Տես Ա. Դանալանյան, նշվ. աշխ., էջ Լ-ԼԱ:
8. Տես Ե. Լալայան, Վարանդա, Ազգագրական հանդես, Բ գիրք, 1897թ., էջ 189
9. Տես Նույն տեղը
10. Տես Ա. Ղազիյան, Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15, 1983, էջ 150
11. Տես Ա. Բաբախանյան, Ուխտավորի հիշատակարանը, 1885, էջ 83, Ա. Լիսիցյան, Լեռնային Դարաբաղի հայերը, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 12, 1981, էջ 57
12. Տես Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, 1991, էջ 90
13. Տես Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, Նմուշներ Լեռնային Դարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, 1978, էջ 141
14. Տես Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 152
15. Տես Մ. Գրիգորյան-Սպանդարյան, Լեռնային Դարաբաղի բանահյուսությունը, 1971, էջ 337
16. Տես Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 203
17. Տես Լ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 80
18. Տես Մ. Առաքելյան, Ռ. Ղահրամանյան, նշվ. աշխ., էջ 137
19. Տես Ա. Պետրոսյան, Արջի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, Բանբեր Երևանի համալսարանի, 1995, N 3, էջ 163: Գայլի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, Բանբեր Երևանի համալսարանի, 1989, N 2, էջ 69
20. Տես Լ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 79
21. Տես Նույն տեղը, էջ 72
22. Տես Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 224
23. Տես Մ. Բաղխուդարյան Արցախ, 1885, էջ 414
24. Տես Մ. Գրիգորյան-Սպանդարյան, նշվ. աշխ., էջ 338
25. Տես Ա. Բաբախանյան, նշվ. աշխ., էջ 9
26. Տես Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 154
27. Տես Մ. Գրիգորյան-Սպանդարյան, նշվ. աշխ., էջ 335
28. Տես Րաֆֆի, Խամսայի մեղիքությունները, 1895, էջ 126
29. Տես Ա. Դանալանյան, նշվ. աշխ., էջ 348
30. Տես Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 147
31. Տես Ա. Ղազիյան, Ռուս-պարսկական պատերազմների արծազանքները հայ բանահյուսության մեջ, Պատմաբանասիրական հանդես, N3, 1978, էջ 114

ԵՐԿՆԱՅԻՆ ՍԱՐՄԻՆՆԵՐ ԵՎ ԵՐԵՎՈՒՅՅՆԵՐ

1. ԻՐԻՔՆԱԿ

Իրիքնակը մին վըխըվուտ, հըմանշուտ այսիզի՞ ա լայ. բըշէրը վըխը՛ցալ ա տուս կ'ա, ցիրը՛կը հիմանճալ: Մարը, ճարը կըտըրած, մին փոնջ ասը՛ղ ա ուուվալ, հանցու հու վեր ծօզի աշկավ տա, աշկերը ծակէ: Չըբէրանը միիէնգ՛ էլ լիլիլնակը, մին ասլանու մաշկու նըտած, յիրգի՛նք՛ավը շօ ա կ'աս, հուվ էլ վէլլ բիղի ձւրան յիշի ա, ասը՛ղը բըղէ ա աշկերը:

Մին-մին քաշկերը սը՛րտ ըն ընէս, յորա պըրծնէս, վեր իրիքնակէն կ'ուղանան, իրիքնակը տըխըրվէս ա, խըվըրէս, ամա ասլանը բըշկէրէն լիլիլէս ա, մարթիքը՛ն էլ տափան ըն հարա-իըրօց ընէս, միսի ղըզընէ՛քը վեր լիլիլէս, թըվանգ՛ավ յորա տաս, իրիքնակէն ղըղէս:

2. ԼՈՒՄՆԻՆՎԱ

Լուսնիճճան ա իրիքնակը այսպէր-քուր ըն իլայ: Իրիքնակը այսճի՞զ՛ ա, լի՛, իւրունք ա իլայ, լուսնիճճան պը՛լ: Մին օր՛ մարը խըմօր հունցելիս, յէկալ ա, խընգարալ, մարը կըզընվալ ա, խըմօրուտ ծէրքալ չըմկալախ տըվալ իրէսէն: Միիէնգ՛ էլ, վեր յէշում ըս, լուսնիճճին իրէսէն մօրը խըմօրուտ մըննէրէն հը՛տըրը յըվան ա:

3. ԱՍԹԵՐ

Յիրգի՛րումըս հիշքան մարթ կա, էնչանջ ասթըխ կա. ամէն մարթ մին ասթըխ անէ: Հու վեր մօրա ծընվում ա, ընդըրա նըրը՛տ մին ասթըխ ա լիս աշխարք կան, ոլինչէվ գ'անքէն վէրը լիս տամ: Հու վեր մը՛նում ա, ընդըրա ասթըխը ծըլան ա, վէլլ ընգում: Մը՛ծ մարթկանցը ասթըխըը մը՛ծ ըն, կուճի մարթկանցը կուճի, կըմուսալ մարթկանց ասթըխը պարզ՛ ըն լիս տամ, բէյնամուս մարթկանցը սթթըխը շատ թուլ, լ՛ըրա ինրի ծնալիլի յոն անում:

4. ՏԻՐՄԱՆԿՈՐԻ ՃԵՆԱՊԱ / ՏԻՐՄԱՆՈՒ ՀՈՐԷ

ա) Ծընը՛նընը մին հըթըրըը՛ցու տէրման պըրծնում ա, քիմամ ա, վար իլիլըվանան կ'ուղանա, ամա տօն տընէլիս փիւսննը՛գիւ վա անում, տէրմանը թըլում յերգի՛նք: Հէտըն էլ մինը՛վ միիէնգ՛ ըրվան ա յիրգի՛նքիւնը:

բ) Մին կիլիլու մօրթը կը՛ցած կընէ՞զ՛ դունաղէն վը՛ննէրը լըվընաս տը՛ղը տըննաս ա, վեր ք'օջ վը՛ննէր ա: Բըշէրը նի յա մըննէս ըտըրա օթաղը, հանցու օտ, դօնաղը դիմաթալը թըլսէս ա ըտըրա ծըծէն, կաթնէն ցալթունը պիլըրնաս ա յերգի՛նքը, հէտըն էլ չըբէրանը միիէնգ՛ ըտի մընաս ա:

5. ԵՆՐԺ

ա) Ասում ըն տափէն տակէն մին մը՛ծ աննա կա, սաղ յերգի՛րը են ա էտ ուուրին մաշկէն տիրած: Մին մը՛ծ էլ պէնը կա, դաթունը կան ա, ըտըրանա կըծում: Աչնը, վեր հաթին պիցըրցնում ա, թա էտ ճանցին թըխէ, յերգի՛րը ուուրիւր ա կան, շարժ ա ինում:

բ) Տափեն տակեն երկու քէրան կա: Կէր պըլըպըլէ յըն տաս, իւրիւր նիհէտ պըզըպօզի ընէս, սաղ յէրգիւր տիւրիւր ա կ'աս, շնորժ ա կոյունաս:

6. ԿԱԾԱԿ: ՈՒՐՕՏՈՒՅ

ա) Յիրգիւնքըմը մին պառապ կընէգ' կա: Կէր տուռուտէս ա, ուրտուց ա ինիս: Մարթը կըզնըվէս ա, յունբուրուզավը խըզիտակէն տըրըքցընէս, աշկէրը կըծիկածի յա ընէս:

բ) Յիրգիւնքըմը երկու դօշ կա՝ իւրիւր նիհէտ բնրնա: Կէր դօշի յըն տաս, կածանկ ա կոյունաս, ուրտուցը ընզընէս ա ախշարըջս:

7. ԹՅՈՒ

Հնսնուքն ա Ալին հըրկըզվէ ցօրէն ըն վարում, հընծնն, ամիա պիծիւնէիս տըղը Ալին շընըմըրտըթօթուն ա անում, սաղ ցօրէնը խըլ'ում: Հնսնուք դիրխօր ա ընգում, լնց ինում, ըրտըսուքնան թօռ ա կոյանում:

8. ՈՒՐԹԱՍԱ, ԶԵՍԾՐ, ՈՒՐՈՒԳՈՒ

ա) Յիրգիւնքիւմը իրը՛ք դուշ կա: Կէր առաչիւնը ծուվվամ ա, ծանքը ծանքիւմ ա, վէր էրկունքիւնըն ա ծուվվամ, տըղ'նում ա քըսօր, իրը՛քիւնքիւնը ծուվվալամը յետըն էլ մըթնում ա:

բ) Յիրգիւնքըմը մին պառապ կընէգ' կա՝ մին սիպտակ, մին էլ մին սըվ կըծէգ' ծէրքէն: Սիպտակը կըզվէս ա, ցիրը՛կ ա ինիս, վէր սըվըն ա կըզվէս, քըշէր ա ինիս:

9. ՃՈՐՀԵՂԷՂ

Աստուծ մէիէտ կըզնըվում ա մարթկանցը յըրա, վօրօշում, վար ճըրիէղէղ անէ, լօխճին կըտօրէ: Նօյ ընումավ մին ըստուծասէր մարթ ա ինում, մէնակ ըտըրան ա արագ տամ, վար կըլիսէն ճարը տըղ'նաս: Նօյըն էլ վախտ չի կուրցընում, պիրում ա, մի մը՛ծ նալ շինում, իւրան կընէգ'ի, խօխէրքը, հիյվըննէն-պանը նի ածում միջը, ըրխըյնանում: Վար ճըրիէղէղը ինում ա, ըշխարքէս տակէն հինչու կա, մընամ ա ճիրին տակէն, փուչանում: Մէնակ իւրանք ըն ըզաղվում, յը՛տնան մարթկուցիւնը նօրից բըհամ քըցիւմ:

Գ Յ ՈՒ Ղ Ե Ր

10. ԴԱՐԱԲԱՂ

Ասում ըն՝ Լենկ-Թեմուրը վէր հըսալ ա Գօրիս, իւրան մարթկանցան մին լուսնէ հօքու դարկալ ա մէր յէրգիւրը, թա:

- Թը՛ցէք՛, տըղ'սէք՛՝ էտ հուվէրք ըն, հինչ հըրըստօթուն օնին:

Տահանք էլ յը՛կալ ըն, տըղ'սալ, քը՛ցալ, լօխ նաղ ըրալ:

- Յէրգիւրը լ'ավ յէրգիւր ա կանանչ բըղէրում թաղված, ամնա ժուղօվուրթը յուտ դօձձաղ ըն, լ'ավ կինի դըրաղ շօռ տաս:

Ես ըռնըխընէն էլ ըսկացալ ա, ըսկացալ, թա:

- Յը՛ս հանց քըրըքանդ բիդի անիմ էտ կանանչ բաղէրը, վէր տըղ'նա կարա (սև) բաղէր:

Ըտըղան ա մէր յէրգիւրին անումը մընացալ *Դարաբաղ*:

ՀԱՂՈՒԹԻ ՇՐՋԱՆ

11. ԽՈՇԱՊԵՐԹ

ա) Շատ առաչ ըստըղէ տարը-տըրականը Վարթան իխշանըն ա իլնլ՝ ուրան կընզանը՝ Յէրդիսաթէթի նըիէտ: Ուտուց ալ մին մարդար-գիւղանը լըսկըք'նք'նլ տըրա յա իլնլ՝ անըմը Կըրիքօր: Ամնա հինչ կա՛միս, վը՛ր էտ խօխան լիս ախշարք ա յը՛կալ, քըշէրը հօրըն ա մօրը արագ ըն տըվալ, թա Կըրիքօր հնլնմ մըծացած վէչ, օխցը կըծըլան ա, ըսպանէ: Վարթան ընզալ ա յըտածնունքու մաչ: Ճարը կըտրած՝ պէրալ ա, մին մը՛ծ բէրթ շինալ, շըրքըպիլիւր պատ շարալ՝ էնչանց պէցիւր, վը՛ր օխցը իւրան աօրտավը, դուշը իւրան թէվավը կարէ վէչ նի մընա մաչ դօլ, տըղէն տիղնալ էտ բէրթըմ: Ուրէրան մին օր Կըրիքօրէ հէտ հնրը մին ճուվարան խաղու-զատ ա ըղըկիս, ամնա հունց ա պըտըհիս՝ մին գիւրզան օխց նի յա մընիս ճուվարանը, կ'աս բէրթը, նի մընիս Կըրիքօրէ ութաղէն կըրպէտին տակը: Ետ դնրըմըտ մին խաղվու պըտօղ ա վէր ընգիս կըրպէտին յըրա, էտ խօխան ծէրքէն ըղմնվը ուգիս ա ծակէ, յօր օնէ, խաղվէն գիւլնվը տըղ'ան տիւրիւր ա կ'աս. դէ օխցը էն տ տակէն, չէ՛: Կըրիքօր կըզնըվիս ա, պէնան բէլխաբար, դաման պիցըրցընիս, Խանց բըխիս, վը՛ր կարպէտը ծըկիս ա, պօլըմը տընզըվիս: Նծք'նրը կ'աս ա, բա կարպէտը տանէ, թափ տա, յըշիս ըն, տըսմաս՝ տակէն մին ըսպանած օխց: Կըրիքօր տըղ'նալընը բնատ օշան տընիս ա, վէր ընգիս. գիղալ ա, թա օխցը էն ա սաղ: Ախըրը, մարթիք՛ հըվըքվիս ըն, ճուր շաղ տաս, էտ խուլսէն յը՛տ պիրիս: Վարթան ըսկընաս ա, կ'աս, մը՛ծ քը՛կի ըրիս, լօխչին հիւրիւնմնք տաս: Ուտուր անա յը՛տը բէրթին անըմըն էլ, շէնին անըմըն էլ տիւնիս ըն *Ուխցապէրթ*, յը՛տնան էլ *Խըծապէրթ*:

բ) Ըսիս ըն՝ առաչ մին արան յըրգիւրըմ մի թաքավըր իլնլ, էտ թաքավըրիտ մին մարդար տըրա յա ծընվալ: Մի օր մին դէրվիչ ա կ'աս, ըսիս:

- Բու տըղէտ ճակատապիւրը կ'իրալ ըն. վը՛ր մըծանա, օխց կըծըլական ա, յուպանէ:

Էտ թաքավըրը, ճարը կըտրած, կ'աս ա, միհէնգ'վա շէնին տըղ'ը մին բէրթ շինիս, տըղէն տիւնիս մաչին, սաբավ վը՛ր ըստըղ պէցիւր ա, ցօրտ ա, օխց շինիլ: Ըտի էտ տըրան էտ բէրթըմը մըծընաս ա: Մին օր էլ իւտիւր սըլ'տըր յուտուր վա ուգիս, ամնա դէ էտ պէցիւր տըղ'ըր քշտըրաս ա՛՝ նապու ծաքանէն:

քիս ըն, ուսուր Խոր յորգիրան պիրիս: Հունց ա պըտրիիս մին մուխրի օխց նի յա մընիս խաղվեն ճուվարանը, լիհա վը՛ր տըղան ուզիս ա, թա ճիթը յոր օնէ, ուսուր պըկավըն ա տաս, կըծիս, ըսպընիս: Թաքավը՛րը, վը՛ր ըսկընաս ա, կըլիսն դափաղը յը՛ր ա կընաս, կհաս ա, էտ բէրթը քըրքընը ըրիս, թա:

-Էս յերգիր չի, էս օխցու բէրթ ա:

Ըտի էլ ըտըղէտ անընը մընաս ա *Օխցու պիրթ*, յը՛տնան էլ *Խըծապիրթ*:

12. ԹԵԶԽԱՐԱՐ

Թա Հնդրոնթա ժողովուրթը դարդ շատ ա տը՛սալ, էս շինըցե՛ք էլ ըսկի մին լիավ օրու ռուջահ չըն յը՛կալ, ընդըրա հէտ, վէր շէնը համ կիծի յա, համ էլ էն ա զըհմանընը. լիհն հինջ դիշման ըտըղավ անց ար կընաս, նի յար մընէս շէնը, փուջըցընէս, խարաբ ընէս, սաղ թըլընէս, տընէս:

Ըտի էնքան ճլլի-ճլլի էտ շէնը խարաբ ըն ըրալ, վէր անընը մընացալ ա *Թէգխարաբ* (շուտ-շուտ փչացող):

13. ՍԱՐԷՆ ՇԷՆ / ՇԱՂԱԽ

ա) էս շէնին բընծվրան Պուղուս ա տըրալ: Մին էրկու հարուր տարէ առաջ ա լալ, Պուղուս ալ Իրանա Ղըրդաղընըն ա լալ ըպրիս: Մին օրէ կընէ՛գը նախշուտ գիւլբա յա ըրալ, կըցալ ա, տիւս յըկալ շինածաջ: Մի պարսիկ ընընխընէ շէխ ա լալ, տըսալ ա, թա:

-Էտ գիւլբաստ բիղը հանըս, իզ տաս:

Պուղուս յըկալ ա տօն, քընէնք՛ ըրալ, թա:

-Էս վը՛ր ասօր գիւլբաս ա խըլիս, էքիւց ալ կընը՛գըն ա խըլլանկան, լիավըն էն ա քօջըն, ուսուր անա պըրօցընը:

Ատըն ա անէլը մին ա տըրալ. կընը՛գըն ա օխտը խօխան յոր ա կալալ, յըկալ, էս սարէն կըլիսն վը՛ր յըկալ:

Ըտի ալ շէն ա տըրալ, անընը մընացալ *Սարէն շէն*:

բ) էս շինըցե՛ք յըկալ ըն Իրանէն Շաղախ շէնան: Միվթա յըկօղըն ալ լալ ա Ըվաքից Նազար: Էտ Նըզարէ կիւմաշը մին օր կուլոջիս ա, շատ ա շօր կհաս, ուսուր-ուսուր հըրցընիս, վէշ մինը տըսած չինիս: Ճարը կըտրած կհաս ա տօն, կընգանը թա:

-Ա՛ կընը՛գ, տիւսան-տիւսան շինի, ածի խուրջինը, էքիւց քիւնան ըն, Ըրասխէն էն դօլբըք շօր կհամ. բալթնա կիւմաշը լըղ ա տուվալ, ընցալ էն բարան՛իր: Ըտի շօր կալալ Նազար կհաս ա, հընիս ըստըղ, տըսնաս կիւմաշը Մակունց ըխաիրին քըշտէն ծընած: Ըստըղէք Նըզարէ շատ ա տօր կհաս. քիս ա, ուրան ազկը-ծուաղ վըրքըս, կհաս, ըստըղ շէն քըցիս:

Շէնին անընըն ալ ուրանց քիւնան շէնին ընընան տիւնըս ըն *Շաղախ*, ամմա շատըրը *Սարէն շէն* ըն ըսիս, ուսուր հէտի, վը՛ր շէնը շատ ա պօցնըր էն ա սարէն պըթկէն:

14. ԿԸՐԹՆԱՇԱՍ / ԷՐԻՇԱ

Էս շէնին տըղըն առաջ վարթեր ա լալ, չօրք՛ դօլըն էլ ծընալ: Վարթերը կըտօրալ ըն, տըղըն շէն շինալ, անընը տիրալ *Կըրթնաշատ* վարթերը շատ: Մին փարան էլ ասնա՛ վարթեր չի լալ, գիւլնաստ ա լալ էնքան շատ, վէր ժողովուրթը հըցըրալ չըն, թա գիւլնասը բիջնիրին, լօխ վը՛րթնալ ա, ըտըրա հը՛տէ էլ ըտըղէտ անընը տիրալ ըն *Կըրթնաշատ* վը՛րթընը շատ:

